ՆՈՒԱԳՆԵՐ

Օ՜, խնդրում եմ, մի՛ նորոգիր
Իմ մրմնջող վէրքերը.
Մի՛ յիշեցնիր սիրոյ նախկին,
Երգուած ու հին երգերը:

Մի՛ հմայիր ինձ երկնային
Գոհարափայլ աչքերով.
Մի՛ կաշկանդիր ուշք ու միտքըս-
Քո հիասքանչ պատկերով:

Առանց քեզ էլ ես ցաւ ունիմ,
Ես վիշտ ունիմ քիւրաւոր.
Առանց քեզ էլ կուրծքս տկար,
Արիւնոտ է, վիրաւոր:

Ես ի՞նչ սրտով սէրըդ երգեմ,
Երբ եղբայրըս հարազատ
Տառապում է անօգնական,
Դառը լալիս յուսահատ:

Արդեօք ի՞նչ փոյթ ուրիշներին,
Եթէ քեզի ես սիրեմ.
Ումըն ի՞նչ զորձ, ազգին ի՞նչ շահ,-
Եթէ սրտիդ ես տիրեմ:

Ումը՞ն ի՞նչ գործ՝ թէ չընաղ է
Սրտիս սիրած իմ փերին.
Մի՞թէ մարդիկ կարո՞ղ են իմ
Սիրոյ ունայն երգերին:

Առանց այն էլ մեր աշխարհը
Սիրոյ երգով հեղեղուած՝
Սիրահարի արցունքներով
Ողողուած է ու ցողուած:

Արմենիայի բուրաստանում
Էլ ոչ մի հատ վարդ չը կայ,
Որ սոխակի տանջանքներին
Եղած չ'ըլնի լուռ վրկայ:

Ինչպէս որ իմ անուշ վարդը
Ծաղկանց միջից քաղուած է,
Այնպէս էլ իմ սրտի սէրը
Արդէն վաղուց թաղուած է։

Երբ բոցավառ, մեծ հրդեհից
Սիրտըս այրուեց, խորտակուեց—
Փլատակների, մոխրի տակին
Սէրըս հանգաւ ու թաղուեց:

Դո՛ւ, հնախոյզ գնդեցկուհի՛,
Ի՞նչ ես պտրում իմ սրտում.
Աւերը սրտիս փլատակները
Է՞ր ես նորից դու քանդում:

Երկարատև պնդումներից
Օ՜ մի գուցէ սրտիս մէջ՝
Մոխրի տակին՝ գտնես յանկարծ
Սիրոյ մի կայծ դու անշէջ։

Դո՛ւք, որդեգուրկ, լալահառաչ,
Անմխիթա՛ր ծնողնե՛ր.
Դո՛ւք աշխարհի բոլոր դժբաղդ,
Յուսահատուած սգւորնե՛ր,—

Ձեր վշտերը, ձեր ցաւերը
Եթէ ձուլէք միասին,
Չե՛ն հաւասար լինիլ նոքա
Վշտիս փոքրիկ մի մասին...

Նա՛, որին մենք ՙՆէ՛ ենք կոչում
Ու խոնարհում՝ առաջին.
Նա՛, որ երբէք չէ՛ ունկընդրիր
Բանաստեղծի հառաչին—

Անգըթաբար սիրտըս մտաւ,
Շարժեց նորա թելերը,
Զքնաղութեամբ՝ ինձ հմայեց,
Վառե՛ց նախկին իմ սէրը...

Դո՛ւք, չարաբաղդ սիրահարնե՛ր,
Եկէ՛ք կազմենք հանուր սուգ.
Եկէ՛ք ողբանք մենք միասին,
Թափենք աղի արտասուք։

Մեր բոլորի ցաւը մէկ է,
Օ՛ եղբայրնե՛ր վշտահար.
Եկէ՛ք սփոփենք, եկէ՛ք սիրտ տանք,
Մխիթարե՛նք մենք իրար...

ՅՈՎ. ԹՈՒՄԱՆԵԱՆՑ